

2022թ. մարտի 14-ին Լճաշեն գյուղի Ա.Տեր-գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված հայ գրականության գագաթներից մեկի՝ արևապաշտ բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյա հոբելյանին:

Դպրոցում ամենուր Չարենցն էր, չարենցյան խորհմաստ պատգամ՝ <<Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է>>:

Դասասենյակում Եղիշե Չարենցի մեծադիր նկարն էր, Չարենցի ու մեծերի խոսքերը, նկարներ, գրքեր, վահանակներ, ծաղիկներ...

Ցերեկույթն սկսվեց <<Ես իմ անուշ Հայաստանի>> երգի հոգեթով երաժշտությամբ ու պարով:

VI-XI դասարանների աշակերտներն իրենց գեղեցիկ խոսքով ներկայացրին մեծ պոետի կյանքի անմոռաց, հետաքրքիր էջերը, նրա խոսքերը, բանաստեղծություններն ու պոեմները:

Հնչեցին Չարենցի խոսքերով գրված երգերը՝ <<Լուսամփոփի պես աղջիկ>>, <<Հեռացումի խոսքեր>>, <<Հայրենիքում>>:

Չարենցը սովորական անձ չէր, ինչպես իրավացիորեն ասել է Մարտիրոս Սարյանը. <<Նաիրին ծնեց Չարենցին... ժայռակոփ պատկերներ և սեպագրեր տեսավ, ծաղկազարդ մագաղաթներ և ձուլածո տաճարներ, բայց ծով արյան ու ծով ցավերի մեջ... բարձրացրեց գլուխը, տեսավ շողացող արևը... Եվ իր հայրենիքի արցունքները սրբելու համար մխրճվեց փոթորիկների մեջ ու ելքեր որոնեց...>>:

Աշակերտները ներկայացրին, որ Չարենց-Բանաստեղծն ու Չարենց-Մարդը դարձել են հավերժության ուղեկից:

Եղիշե Չարենցը եկել է դարերից ու հաղթականորեն գնում է դեպի ապագա...

Ե՛ս եմ հիմա- մի պոետ, և իմ անունը Չարենց-
Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ:

Ցերեկույթը կազմակերպել էր հայոց լեզվի, գրականության և գրաբարի առարկայական մեթոդական միավորումը, այն մեծարանքի արտահայտություն էր նորագույն շրջանի հայ պոեզիայի առաջնորդի, ազգային հանճարի հանդեպ:

Աշակերտներին, կազմակերպիչներին շնորհավորեց տնօրեն Աիդա Մուրադյանը՝ ավելացնելով, որ մարտիրոսանալու սխրանքով

**Չարենցը հավիտենապես հայ ժողովրդի հետ է, նրա լուսավոր
ձգտումների հետ:**

**Չարենցի պոեմներում հառնում է Նաիրյան երկիրը, որը, ձուլվելով
հեղափոխությանը, հեղափոխության բրոնզե թևերով ձգտում է դեպի
մարդկության գալիք լուսավոր հեռուներ.**

**Ողջույն — ավելի՛ առնական, արի,
Քան ողջույնը քո, երկիր արնաքամ,
Կարմի՛ր Նաիրի...**

**Բանաստեղծը հավատում էր. առաջին անգամ իր սրտում են վառ
խտացել ու մարմին առել Նաիրի երկրի գալիքները:**

Ջեմմա Դանիելյան , Լճաշեն
հայոց լեզվի, գրականության և
գրաբարի առարկայական մեթոդական
միավորման նախագահ